



## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

**Մայիսի 30-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստե, յիսներորդ օր ի Ջատկեն).**

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթորյանը և քարոզում Վեհափառ Հայրապետը՝ Հոգեգալուստյան տոնի հոգևոր-եկեղեցական մեծ նշանակության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ տաղանդավոր նկարիչ Սարգիս Խաչատուրյանի հիշատակին:

\* \* \*

**Մայիսի 31-ին, երկուշաբթի.—Այսօր առավոտյան Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Վենետիկի Մխիթարյան վանքի միաբան հայր Հարություն վրդ. Պատիկյանը, որը Ն. Ս. Օծուխյան բարեհաճ կարգադրությամբ շուրջ երեք ամիս հոգևոր ճեմարանում, լսարանական բաժնում, կրոնական առարկաներ էր դասավանդում:**

\* \* \*

**Հունիսի 6-ին, կիրակի.—Ա. կիրակի զկնի Հոգեգալուստան. Սկիզբն Յարութեան կիրակեփց. Յիշատակ Եղիայի մարգարէին.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բելլերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ ս. Հոգու միջոցով եկեղեցու հաս-

տատման և քրիստոնյա ժողովուրդների միջեւ սեր և խաղաղություն հաստատելու մասին:

\* \* \*

**Հունիսի 7-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հոփսիսմեանց. Եկեղեցական հանդէս ի վանս սրբուհոյ կուսին Հոփսիսմեայ:**

Այսօր ս. Էջմիածնի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են մեկնում ս. Հոփսիսմե վանք:

Օրվա ս. պատարագը մատուցում է վանահայր տ. Պողոս վրդ. Տեր-Նշանյանը և քարոզում՝ «Անձինք նուիրեալք սիրույն Քրիստոսի» բնաբանով:

Ս. պատարագի վերջավորությանը կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ս. Հոփսիսմե վանքի նորոգության բարերար միջանաքնակ պրն. Երվանդ Հյուսիսյանի գերդաստանի բոլոր ննջեցյալների հոգիների համար:

\* \* \*

**Հունիսի 8-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Գայանեաց. Եկեղեցական հանդէս ի վանս սրբուհոյ կուսին Գայանեայ.**

Ս. Գայանե վանքում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզում՝ «Արևմուտք յարևելս ընթացեալք հասին. քարոզել յայտնապէս զքնաղ տե-



սույթինն» քննարանով:

Հավարտ և պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերարների ննջեցյալների հոգիների համար:

\* \* \*

**Հունիսի 10-ին, հինգշաբթի.**—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանազիանայ եպիսկոպոսին. եկեղեցական հանդես ի վանս և Շողակաթի.

Այսօր և Շողակաթ եկեղեցում և պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարությանը:

Հավարտ և պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերար Սուրեն Գալեհտերյանի ննջեցյալների հոգիների համար:

\* \* \*

**Հունիսի 12-ին, շաբաթ.**—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Հակոբ քին. Հակոբյանը:

\* \* \*

**Հունիսի 18-ին, կիրակի.**—Բ կիրակի զկնի Հոգեգալստեան. Տօն կաթողիկէ և Էջմիածնի.

Մայր Աթոռի մեծ տոնի առիթով Մայր տաճարում և պատարագ է մատուցում Իրաքից ուխտավորաբար և Էջմիածնում գտնվող տ. Օշական քին. Գրլըճյանը և բարոգում՝ և Էջմիածնի հոգևոր-եկեղեցական առաքելության մասին:

Հավարտ և պատարագի Իջման և սեղանի առաջ տեղի է ունենում հայրապետական մաղթանք՝ հավատացյալ խումներամ բազմության ներկայությամբ:

\* \* \*

**Հունիսի 17-ին, հինգշաբթի.**—Այսօր առավոտյան, ժամը 12-ին, Տրիպոլիի Իլիա միտրոպոլիտը և Հոմսի Ալեքսեյ միտրոպոլիտը, որոնք Մոսկվայում մասնակցել էին ռուսաց նորընտիր Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի գահակալության հանդեսին, Մոսկվա-Բեյրութ երթուղու վրա Երևանում, կես ժամով, այցելեցին Մայր Աթոռ և Հայոց Հայրապետին:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, քույր եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականներին դիմավորում է տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը և բարի գալուստ մաղթում:

Բարձրաստիճան հոգևորական հյուրերը ավտոմեքենայով առաջնորդվում են Մայր տաճար, ուր իրենց ուխտն ու աղոթքը անելուց հետո, Վեհաբանում ներկայանում են Հայոց Հայրապետին:

Հայոց Հայրապետի և տ. Իլիա և տ. Ալեքսեյ միտրոպոլիտների միջև Վեհաբանում տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Հարգելի հյուրերը հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում օդանավակայան, ուր նրանց ճանապարհում և բարի երթ է մաղթում տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը:

\* \* \*

Նույն օրը, հետ միջօրեի ժամը 17-ին, Մայր Աթոռ է ժամանում Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը մեկ շաբաթ Մայր Աթոռում մնալուց հետո մեկնում է իր պաշտոնատեղին:

\* \* \*

**Հունիսի 20-ին, կիրակի.**—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարությանը:

\* \* \*

**Հունիսի 21-ին, երկուշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Քերթուկի հայոց հոգևոր հովիվ տ. Օշական քին. Գրլըճյանը, որը ամսի 8-ից ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

\* \* \*

**Հունիսի 27-ին, կիրակի.**—Դ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Հունիսի 29-ին, երեքշաբթի.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Բելրուսի Կրոնասեր տիկնանց համախմբման վարչության անդամները՝ տ. Գևորգ վրդ. Կարպիսյանի գլխավորությամբ: Ուխտավորների կազմում էին. տեր և տիկին Կարապետ և Արուսյակ Ալթունյաններ, տեր և տիկին Գեղամ և Անգիսե Տանձիկյաններ, տեր և տիկին Սիսակ և Արաքսյա Վարժապետյաններ, տիկին Զվարթ Ներսեսյան, տեր և տիկին Հակոբ և Ծաքե Ծաքչյաններ, տիկին Ռոզին Բաբայան, պրն. Նազարեթ Դեմիրճ-



յան, տեր և տիկին Հայկազուն և Հայկանուշ Թորոսյաններ, տիկին Էլմաստ Հինահինյան, տիկին Հասմիկ Սապունջյան, տեր և տիկին Ավետիս և Լուսաթագ Մարգարյաններ, տիկին Ռոզին Նազարյան:

Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, ուխտավորները Վեհարանում ներկայանում են Հայոց Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնությունը և ս. Աջը համբուրելու:

**Հուլիսի 1-ին, հինգշաբթի.**—Տոն սրբոց Թորոսյանցն մերոց Սահակայ և Մեսրոպայ:

Այսօր Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Օջական՝ ս. Մեսրոպի դամբարանը:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանը և քարոզում երկու եռամեծ թարգմանիչների՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերարներ Հ. Թ. Լազարոսյան և Պ. Ալեքսյան գերդաստանների ննջեցյալների հոգիների համար:

**Հուլիսի 2-ին, ուրբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Փարիզից տ. Նորվան վրդ. Զաքարյանը և Մարսելից տ. Վաչե վրդ. Իզնատիոսյանը: Նրանց Երեվանի օդանավակայանում դիմավորում են տ. Նարեկ վրդ. Ծաբարյանը և Արտաշես սրկ. Մուշեղյանը:

Ուխտավոր վարդապետները Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո ներկայանում են Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Ն. Սրբության օրհնությունը:

**Հուլիսի 11-ին, կիրակի.**—Ջ կիրակի զկնի Հոգեգալստեան. Բարեկենդան վարդավառի պահոց:

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վաչե վրդ. Իզնատիոսյանը և քարոզում՝ Մատթեոսի Ավետարանի (ԺԴ-13) հինգ հացերի բազմացման հրաշքի մասին:

Պատարագիչ հայր սուրբը հացերի բազմացման հրաշքը գեղեցկորեն կատարում է հայ ժողովրդի հրաշալի վերածննդյան հետ:

**Հուլիսի 18-ին, երեքշաբթի.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արեվելյան թեմի առաջնորդ տ. Թորոսյան արքեպ. Մանուկյանը:

**Հուլիսի 18-ին, կիրակի.**—Վարդավառ. Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Թորոսյան արքեպ. Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Զրիստոսի պայծառակերպության տոնի խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա էին ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների Եկեղեցասեր հայ երիտասարդաց միության անդամները:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ամերիկահայ երիտասարդների ննջեցյալների հոգիների համար:

**Հուլիսի 19-ին, երկուշաբթի.**—Մեռելոց:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համորեն ննջեցելոց:

**Հուլիսի 25-ին, կիրակի.**—Բ կիրակի զկնի Վարդավառի:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Նորվան վրդ. Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Հատուք քո կեցուցին զքեզ» բնաբանով:

**Հուլիսի 29-ին, հինգշաբթի.**—Այսօր Ֆրանսիա՝ իրենց պաշտոնատեղերը մեկնեցին, շուրջ մեկ ամիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, տ. Նորվան վրդ. Զաքարյանը և տ. Վաչե վրդ. Իզնատիոսյանը: